ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

«ԲԱՐԳԱՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

0095, ՀՀ, Երևան, Մ.Բաղրամյան պող. 19, +374 11 51 32 05, bhk@parliament.am

---

Ապրիլի 13 2020 թ.

Հայաստանի Հանրապետության

Ազգային ժողովի նախագահ

ԱՐԱՐԱՏ ՄԻՐԶՈՅԱՆԻՆ

Մեծարգո պարոն նախագահ,

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 109-րդ, «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 65-րդ եւ 67-րդ հոդվածներով, օրենսդրական նախաձեռնության կարգով ՀՀ ԱԺ «Բարգավաճ Հայաստան» խմբակցության անունից Ձեզ եմ ներկայացնում Հայաստանի Հանրապետության «Հարկային օրենսգրքում» լրացումներ կատարելու մասին օրենքի նախագիծը:

Գրության հետ կից ներկայացվում է՝

ա) նախագիծը (հիմնական զեկուցող՝ Միքայել Մելքումյան)

բ) նախագծի ընդունման հիմնավորումը,

գ) գործող Օրենքում լրացումներ կատարելու մասին տեղեկանքը:

Խնդրում ենք սահմանված կարգով նախագիծը դնել շրջանառության մեջ:

Առդիր՝ 9 էջ:

Հարգանքով՝

ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԱՐՄԱՆ ԱԲՈՎՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
«ԲԱՐԳԱՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

0095, ՀՀ, Երևան, Մ.Բաղրամյան պող. 19, +374 11 51 32 05, bhk@parliament.am

13.04.2020թ.

## ՈՐՈՇՈՒՄ N 25/20

Առաջնորդվելով «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 8-րդ հոդվածի 2-րդ մասով ՀՀ Ազգային ժողովի «Բարգավաճ Հայաստան» խմբակցությունը.

**Որոշեց՝**

ՀՀ ազգային ժողովի նախագահին ներկայացնել

Հայաստանի Հանրապետության «Հարկային օրենսգրքում » լրացումներ

կատարելու մասին օրենքի նախագիծը:

ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԱՐՄԱՆ ԱԲՈՎՅԱՆ

ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՕՐԵՆՔԸ

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ» ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2016 թվականի հոկտեմբերի 4-ի ՀՕ-16-Ն հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 19-րդ հոդվածը լրացնել նոր՝ 7-րդ մասով.

7. Հայաստանի Հանրապետությունում համաճարակի տարածման հիմքով արտակարգ իրավիճակի պայմաններում հայտարարված արտակարգ դրության ողջ ընթացքում, բայց ոչ ավել քան երեք ամիս ժամկետով ՝ հանրային սննդի, մանրածախ առևտրի (բացառությամբ սննդամթերք և դեղորայք վաճառողներ), մետաղական հանքաքարի, երկաթի հանքաքարի, գունավոր մետաղների հանքաքարերի արդյունահանման (բացառությամբ ոսկու հանքաքարի արդյունահանման) գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտներին տրամադրել հարկերի վճարման ժամկետի հետաձգում (հարկային արձակուրդ): Արտոնությունները տրամադրվում են շահութահարկի կանխավճարի և ռոյալթիի կանխավճարի գծով:

Հոդված 2. Օրենսգրքի 19-րդ հոդվածը լրացնել նոր 8-րդ և 8.1-ին մասերով.

8. Հայաստանի Հանրապետությունում համաճարակի տարածման հիմքով արտակարգ իրավիճակի պայմաններում հայտարարված արտակարգ դրության ողջ ընթացքում, բայց ոչ ավել քան վեց ամիս ժամկետով տրամադրել հարկերի վճարման ժամկետի հետաձգում (հարկային արձակուրդ)՝

1) հանրային սննդի տնտեսվարող սուբյեկտներին՝ շրջանառության հարկատեսակի գծով,

2) զբոսաշրջային գործակալությունների, զբոսաշրջային օպերատորների, տեղերի ամրագրման և զբոսաշրջության ոլորտի այլ ծառայությունների, հյուրանոցների և հյուրատների տնտեսվարող սուբյեկտների՝ շրջանառության հարկատեսակի գծով,

3) մշակույթի, զվարճությունների և հանգստի, վարսավիրանոցների և գեղեցկության սրահների այլ ծառայությունների գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտներին՝ շրջանառության հարկատեսակի գծով:

8.1 Սույն հոդվածի 8-րդ մասով սահմանված շրջանառության հարկատեսակի գծով արտոնությունները տարածվում են 2020 թվականի ապրիլի 1-ից հաշվարկվող շրջանառության հարկի գումարների վրա։

Հոդված 3. Սույն օրենքը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը։

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ» ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ընթացիկ իրավիճակը և նախագծի ընդունման անհրաժեշտությունը

2020 թվականին Հայաստանի Հանրապետությունում հայտարարված արտակարգ դրության պայմաններում սահմանափակվեց մարդու ազատ տեղաշարժը: Կորոնավիրուսի տարածումը դանդաղեցնելու և դրա դեմ պայքարելու նպատակով խրախուսվեց հնարավորինս մարդկային տեղաշարժի կասեցումը և սահմանափակումը, հեռավար աշխատանքային գործունեությունը և առևտրային գործունեության որոշ տեսակների դադարեցումը:

Սահմանափակումների արդյունքում տնտեսության տարբեր ոլորտներ սկսեցին չգործել, և տնտեսվարողները, ինչպես նաև իրենց աշխատակիցները զրկվեցին եկամուտ ստանալուց: Այս պայմաններում պետությունը տվյալ շահառուներին չտրամադրեց հարկային արտոնություններ: Ուսումնասիրելով նմանատիպ իրավիճակներում հայտնված զարգացած և զարգացող երկրների փորձը տեսնում ենք, որ իրավիճակի հետևանքով առավել տուժած որոլտներում գործունեություն իրականացող տնտեսվարողներին պետության կողմից տրամադրվել են հարկային արտոնություններ՝ մասնավորապես.

Շվեդիայում տնտեսվարողներին առաջիկա տարում հարկերը չվճարելու արտոնություն է տրվել: Փորձագետները այնդում են, որ դրա արդյունքում պետական գանձարան մուտք չի լինի 27,5 միլիարդ եվրո, սակայն իշխանությունները գտնում են, որ տնտեսությունը կործանումից փրկելու փորձերն արժեն այդ ծախսերը:

Ֆրանսիայում իրավաբանական անձանց ընձեռնվում է հարկերի վճարումը հետաձգելու հնարավորություն:

Կրասստանում՝ պետությունը տրամադրում է հարկային արտոնություններ զբոսաշրջության ոլորտում: Այսպես, զբոսաշրջության ոլորտում գործունեություն ծավալող ընկերություններին, որոնց

գործունեությունը կապված է հյուրանոցային և ռեստորանային ոլորտի, տուրիստական գործակալությունների, փոխադրող, էքսկուրսիաներ իրականացնող և այլ ընկերությունների հետ տրամադրվում է եկամտային հարկի (մինչև 2020 թվականի նոյեմբերի 1-ը) և գույքահարկի (4 ամիս ժամկետով) վճարումները հետաձգելու արտոնություններ: Հարկային արտոնությունները տարածվել են ներկայումս Վրաստանում գործող 18 հազար ընկերությունների վրա:

Ռուսաստանի Դաշնության կառավարությունը և Կենտրոնական բանկը ներդրել են միջոցառումների աջակցության փաթեթ, որպեսզի կորոնավիրուսի պանդեմիայով պայմանավորված բնակչության և տնտեսության համար առկա բացասական հետևանքները հասցվեն նվազագույնի:

Մասնավորապես, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ օդային տրանսպորտը (ավիափոխադրող կազմակերպությունները) և զբոսաշրջությունն ամենից շատ են կրում առաջացած իրավիճակի բացասական հետևանքները, ՌԴ կառավարությունը որոշում է կայացրել նշված ոլորտում գործող կազմակերպությունների մասով՝ **հետաձգել հարկերի վճարումը:** Հետագայում սա տարածվել է նաև տուժած այլ ոլորտների և ընկերությունների վրա: Օրինակ՝ Տուրիստական ընկերությունները մինչև տարեվերջ կազատվեն նաև «Տուրիստական աջակցություն» ասոցիացիայի պահուստային ֆոնդին և անձնական պատասխանատվության ֆոնդին վճարումներ կատարելուց:

Մարտի 30-ին Ռուսաստանում սահմանվել են ձեռնարկատիրական գործունեության տեսակները, որոնք կարող են օգտվել հարկային արձակուրդից՝

- Ավիափոխադրումներ, բեռնափոխադրումներ
- Մշակույթի միջոցառումների և ժամանցի կազմակերպում
- Տուրիստական գործակալություններ և տուրիզմի բնագավառում գործունեություն իրականացնող այլ կազմակերպություններ
- Հյուրանոցային բիզնես
- Հանրային սնունդ
- Ոչ պետական ուսումնական հաստատություններ
- Կոնֆերանսների և ցուցադրությունների կազմակերպում
- Բնակչությանը կենցաղային ծառայությունների տրամադրման գործունեության իրականացում (վերանորոգում, լվացք, քիմմաքրում, վարսահարդարման ծառայություններ և գեղեցկության սրահներ):

Վերոնշյալ կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը օգտվում են հետևյալ հարկային արտոնություններից՝

- Բոլոր հարկերի վճարումը 6 ամիս ժամկետով հետաձգելու՝ բացառությամբ ավելացված արժեքի հարկի և եկամտային հարկի (կազմակերպությունները և փոքր և միջին ձեռնարկատիրական սուբյեկտների միասնական ռեեսրում հաշվառված անհատ ձեռնարկատերերը)
- Բոլոր հարկերի վճարումը 3 ամիս ժամկետով հետաձգելու՝ բացառությամբ ավելացված արժեքի հարկի և եկամտային հարկի (փոքր և միջին ձեռնարկատիրական սուբյեկտների միասնական ռեեսրում չհաշվառված անձինք)

Նախագծում տնտեսական գործունեության ոլորտները ներկայացված են համաձայն՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2013թ սեպտեմբերի 19-ի N 847-N հրամանի 1-ին կետով հաստատված հավելվածի՝ տնտեսական գործունեության տեսակների դասակարգիչների:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ դեռևս անհայտ է, թե կորոնավիրուսի հետևանքով առաջացած սահմանափակումները երբ կվերացվեն ինչպես ամբողջ աշխարհում, այնպես էլ Հայաստանի Հանրապետությունում, առաջարկում ենք՝ Հայաստանի Հանարպետության հարկային օրենսգրքում կատարել լրացումներ՝ հարկերի վճարման ժամկետի հետաձգում (հարկային արձակուրդ)՝ տեսակի հարկային արտոնության տրամադրման միջոցով:

Այսպիսով՝ կարծում ենք, որ օրենքի նախագծով առաջարկվող լրացումները դրական ազդեցություն կունենան Հայաստանի Հանրապետությունում համաճարակի տարածման հիմքով արտակարգ իրավիճակի պայմաններում հայտարարված արտակարգ դրության հետևանքով՝ Նախագծում նշված առավել տուժած ոլորտների ձեռնարկությունների գործունեության վերականգման և հետագա առողջացման գործընթացի վրա:

# ՏԵՂԵԿԱՆՔ

Հոդված 19. Հարկային արտոնությունները

1. Օրենսգրքով կամ Հայաստանի Հանրապետության օրենքներով կարող են սահմանվել հարկային արտոնությունների հետևյալ տեսակները.

1) հարկից ազատում.

2) հարկման օբյեկտի նվազեցում.

3) հարկման բազայի նվազեցում.

4) հարկի դրույքաչափի նվազեցում.

5) հարկի նվազեցում.

6) հարկի վճարման ժամկետի հետաձգում.

7) Օրենսգրքի դրույթները խախտելու համար հաշվարկված՝ Օրենսգրքով սահմանված տույժերից և տուգանքներից ազատում, նվազեցում, վճարման ժամկետների հետաձգում:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված հարկային արտոնությունների տեսակները կիրառելի են նաև բնօգտագործման վճարի համար:

3. Հարկային արտոնությունները սահմանվում են բացառապես Օրենսգրքով կամ Հայաստանի Հանրապետության օրենքներով:

4. Հարկ վճարողը կարող է հարկային մարմին ներկայացնել հարկային մարմնի հաստատած ձևով հայտարարություն և հրաժարվել հարկային արտոնությունից օգտվելու իրավունքից, բացառությամբ սույն հոդվածի 6-րդ մասով սահմանված դեպքերի: Սույն մասով սահմանված հայտարարության ներկայացման դեպքում՝

1) հարկային արտոնությունը դադարում է գործել հայտարարության ներկայացման օրվանից հետո ձևավորվող հարկման օբյեկտների մասով.

2) հայտարարության ներկայացման օրվանից հետո իրականացվող գործարքները, գործառնությունները Օրենսգրքի կիրառության իմաստով համարվում են հարկվող գործարքներ, գործառնություններ.

3) հարկ վճարողը մինչև հայտարարության ներկայացման օրն ընդգրկող հարկային տարվան հաջորդող հարկային տարվա ավարտը չի կարող հրաժարվել հարկային արտոնությունից չօգտվելու վերաբերյալ հայտարարությունից.

4) հարկ վճարողի կողմից չօգտագործված հարկային արտոնությունը ենթակա չէ փոխանցման հաջորդ հաշվետու ժամանակաշրջաններ՝ ապագա հարկային պարտավորությունների նվազեցման նպատակով.

5) հարկային արտոնությունից չօգտվելը հարկ վճարողին չի ազատում հարկային հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի դրույթները խախտելու դեպքում նրա նկատմամբ սահմանված պատասխանատվության միջոցների կիրառությունից:

5. Հարկման հատուկ համակարգերում գործող կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի և նոտարների համար Օրենսգրքի՝ հարկման հատուկ համակարգերին վերաբերող բաժնով կարգավորվող հարաբերությունների մասով ԱԱՀ-ի և շահութահարկի գծով Օրենսգրքով սահմանված հարկային արտոնությունները կասեցվում են, բացառությամբ Հայաստանի Հանրապետություն ապրանքի ներմուծման գործառնությունների համար ԱԱՀ-ի գծով սահմանված հարկային արտոնությունների:

6. Սույն հոդվածի 4-րդ մասի դրույթները չեն տարածվում Օրենսգրքի 79-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված՝ ԱԱՀ-ի գումարների (կամ դրանց մի մասի) վճարման ժամկետի հետաձգումը վաղաժամ դադարեցնելու մասին գրավոր հայտարարություն ներկայացնելու դեպքերի վրա:

7. Հայաստանի Հանրապետությունում համաճարակի տարածման հիմքով արտակարգ իրավիճակի պայմաններում հայտարարված արտակարգ դրության ողջ ընթացքում, բայց ոչ ավել քան երեք ամիս ժամկետով՝ հանրային սննդի, մանրածախ առևտրի (բացառությամբ սննդամթերք և դեղորայք վաճառողներ), մետաղական հանքաքարի, երկաթի հանքաքարի, գունավոր մետաղների հանքաքարերի արդյունահանման (բացառությամբ ոսկու հանքաքարի արդյունահանման) գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտներին տրամադրել հարկերի վճարման ժամկետի հետաձգում (հարկային արձակուրդ): Արտոնությունները տրամադրվում են շահութահարկի կանխավճարի և ռոյալթիի կանխավճարի գծով:

8. Հայաստանի Հանրապետությունում համաճարակի տարածման հիմքով արտակարգ իրավիճակի պայմաններում հայտարարված արտակարգ դրության ողջ ընթացքում, բայց ոչ ավել քան վեց ամիս ժամկետով տրամադրել հարկերի վճարման ժամկետի հետաձգում (հարկային արձակուրդ)՝

1) հանրային սննդի տնտեսվարող սուբյեկտներին՝ շրջանառության հարկատեսակի գծով,

2) զբոսաշրջային գործակալությունների, զբոսաշրջային օպերատորների, տեղերի ամրագրման և զբոսաշրջության ոլորտի այլ ծառայությունների, հյուրանոցների և հյուրատների տնտեսվարող սուբյեկտների՝ շրջանառության հարկատեսակի գծով,

3) մշակույթի, զվարճությունների և հանգստի, վարսավիրանոցների և գեղեցկության սրահների այլ ծառայությունների գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտներին՝ շրջանառության հարկատեսակի գծով:

8.1 Սույն հոդվածի 8-րդ մասով սահմանված շրջանառության հարկատեսակի գծով արտոնությունները տարածվում են 2020 թվականի ապրիլի 1-ից հաշվարկվող շրջանառության հարկի գումարների վրա: